

ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ ԵՎ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ

Ա. Ն. ՑԵՐ-ՂԵՎՈՆԳՅԱՆ

ԵՐԵՄԻԱ ԶԵԼԵՊԻՆ ՈՐՊԵՍ ՍՈՒՆԱԶԶԻՍ ԲԱՇԽԻ
ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻՑ ՄԵԿԸ

Երեմիա Զելեպի Գյումյուրճյանը ժէ դարի հայ հասարակական կյանքի նշանավոր դեմքերից մեկն էր:

Ժէ դարը հայոց պատմության մեջ նշանակալից է նրանով, որ նախորդ երկու դարերի համատարած ավերածությունից հետո, հալությունը, թե մայր երկրում, թե գաղութներում քաղաքական, տնտեսական և մշակութային ժամանակավոր վերելքի մի շրջան ապրեց¹: Կ. Պոլիսը, ուր գործում էր Երեմիա Զելեպին, հենց այդ դարում դառնում է հայկական կարևոր մտավոր կենտրոն:

Երեմիա Գյումյուրճյանի նախնիները գաղթել էին Հայաստանից և հաստատվել Կ. Պոլսում, որտեղ և 1637 թ. ծնվում է Երեմիան: Նրանց ընտանիքը Կ. Պոլսում որոշ դիրք ուներ և դա նպաստեց, որ նա շուտով բարձրանա հասարակական կյանքում և պոլսահայ միջավայրում դառնա իր ժամանակաշրջանի կարևոր դեմքերից մեկը:

Նա նշանավոր է որպես Կ. Պոլսում հայկական տպագրական գործի հիմնադիրներից մեկը: ԺՋ դարում դեռ նոր էր սկսվել հայ տպագրությունը, երբ մի դար հետո տարածվեց բազմաթիվ հայկական կենտրոններում²: Պոլսահայ տպագրության պատմության մեջ իր ուրույն տեղն ունի նաև Երեմիա Զելեպիի հիմնադրած տպարանը, որտեղ միայն երկու անուն դիրք է լույս տեսել³:

Զելեպիի հասարակական գործունեությունը ոչ միայն պոլսահայ գաղութի մեջ, այլև ժէ դարի հայ հասարակական կյանքում իր արժանի տեղն ունի⁴: Նա վարել է պետական պաշտոններ, եղել է Կ. Պոլսի պատրիարքության խորհրդական և նոտար, և որպես այդպիսին մասնակից է եղել իր ժամանակի ազգային-եկեղեցական կյանքին: Այսպես, օրինակ, Երուսաղեմի միաբաններից Եղիազար վարդապետի էջմիածնին հակաթոռ կաթողիկոսություն ստեղծելու վտանգավոր ձեռնարկության ժամանակ նա եղել է ամենայն հայոց կաթողիկոսի՝ Հակոբ Զուղայեցու պաշտպաններից մեկը:

Երեմիա Զելեպին հմուտ լինելով ոչ միայն հայերենին ու տաճկերենին, այլև հունարենին, լատիներենին և եվրոպական լեզուներին, սերտ կապերի

¹ Լեո Հայոց պատմություն, Գ, Երևան, 1946, էջ 269—280:

² Մ. Օրմանեան, Ազգապատում, Բ, Կ. Պոլիս, 1914, էջ 2686:

³ Գ. Լևոնյան, Հայ դիրքը և տպագրական արվեստը. Երևան, 1946, էջ 80—122:

⁴ Նույն տեղում, էջ 120

⁵ Հ. Անսոյուն, Անձնանունների բառարան, Բ, էջ 139—141: Յ. Օշական, Երեմիա Զելեպի, Սիոն, 1939, 1940:

մեջ էր եվրոպական դեսպանների հետ, որոնցից մեկի պատվերով էլ գրում է Հայաստանի, Փոքր Ասիայի, Պարսկաստանի և Հնդկաստանի աշխարհագրությունը:

Սակայն մենք կուզենայինք ամենից ավելի կանգ առնել նրա գրական գործունեության վրա, որ բազմակողմանի է և հարուստ⁶: Ն. Ալիխյանը Ձեռնպիրի մասին գրած իր ուսումնասիրություններում⁷ հաշվում է մոտավորապես քառասուն անուն աշխատություն, որոնց մեծամասնությունը դեռ մինչև այսօր ձեռագիր վիճակում ֆնում են գլխավորաբար երեք քաղաքներում՝ Երևանում, Երուսաղեմում և Վենետիկում:

Նրա աշխատությունների մեջ մեծ տեղ են գրավում պատմական երկերը, որոնց համար էլ նա պատմաբան է համարվել⁸: Նրա գլխավոր գործերից հրատարակվել են Կ. Պոլսի Պատմությունը⁹ և Օրագրությունը¹⁰, որոնք մեծ նշանակություն ունեն թե՛ այդ ժամանակաշրջանի Կ. Պոլսի պատմության և թե՛ մանավանդ պոլսահայ կյանքի ուսումնասիրման համար: Բացի դրանից նա ունի Օսմանյան կայսրության պատմությունը և Տարեգրական պատմությունը¹¹: Նա ղեկավար է նաև հայոց պատմության և ձգտել է օտարներին ծանոթացնել իր ժողովրդի պատմության հետ: Մ. Չամչյանը, որը ծնվել է Երեմիայի մահվանից 43 տարի հետո (1738 թվին), գրում է. «Թարգմանեաց և ի խնդրոյ գրագիտացն տաճկաց ի լեզու նոցա զպատմութիւն Խորենացւոյն քաղուածով ընդ նմին և զհամառօտ տեղեկութիւն ինչ ի վերայ Բագրատունեաց և Ռուբինեանց»¹²: Անշուշտ Չամչյանը, որը ծնվել և երկար ժամանակ ապրել ու գործել է Կ. Պոլսում, անձամբ տեսած կլիներ Երեմիայի կողմից կազմված Խորենացու Պատմության այս համառոտությունը: Դժբախտաբար սրա գոյություն մասին այսօր ոչ մի տեղ չի հիշվում: Երուսաղեմում հրատարակված նրա օրագրության առաջաբանում Թ. Գուշակյանը գրում է. «Եսկ եթե դեռ հայտնվին և հրատարակվին իր Հայոց Պատմությունը, (հայերեն և թրքերեն գրված) և Հայաստանի աշխարհագրությունը... տարակույս չկա, թե իր տեղը շատ ավելի նշանակալի պիտի դառնա հայ պատմագրության մեջ»¹³:

Կարևորն այն է, որ այս ամփոփ, Հայոց պատմության մասին խոսվում է նրան ժամանակակից մատենագրության մեջ: Այսպես օրինակ՝ Երեմիայի «Համառօտ հարցմունք և պատասխանիք»¹⁴ կոչված ձեռագիր աշխատության մեջ¹⁵ նրա կողմից տրված այլ և այլ հարցերի կողքին կա նաև հետևյալ հարցը.

⁶ Նա ունի նույնիսկ տաղեր: Տե՛ս Ա. Զօպանեան, Երեմիա Ձեռնպիր, Անահիտ, 1903:

⁷ Երեմիա Ձեռնպիր Քեօմիւրճեան, Հանդէս Ամսօրեայ, 1932-1933 Նաև նույնի՝ Երեմիա Ձեռնպիր Քեօմիւրճեան, Աղգ. Մատ. Ճլե, Վիեննա, 1933, էջ 73-190:

⁸ Ղ. Ալիշան, Հայապատում, Վենետիկ, 1901, Ա, էջ 133:

⁹ Ստամբուլի պատմութիւն, հրտ. Վ. Թորդոմեան, Ա, Բ, Գ, Վիեննա, 1913-1938: Ձեռնպիրի այս աշխատությունը թարգմանվել է թուրքերեն Հ. Անդրեասյանի կողմից (Կ. Պոլիս, 1952):

¹⁰ Մ. Նշանեան, Օրագրութիւն Երեմիա Ձեռնպիր Քեօմիւրճեանի, Երուսաղէմ, 1939: Նաև՝ Շողակաթ, Վաղարշապատ, 1913, էջ 47-66:

¹¹ Ս. Նրեմեան, Երեմիա Ձեռնպիր, Տարեգրական պատմութիւն, Բաղմավէտ, 1902, էջ 367-369, 473-479:

¹² Պատմութիւն Հայոց, Գ, Վենետիկ, 1784, էջ 723:

¹³ Օրագրութիւն, Երուսաղէմ, 1939, Առաջաբան:

¹⁴ ՀԱ, 1832, էջ 633:

¹⁵ Մատենադարանի ձեռագիր Նո 72: Այսուհետև կոչելու ենք Մատ. ձեռ.

«Որոնք են պատմագիրք Հայոց» և ապա պատասխանի մեջ թվում է Հայոց պատմագիրների լուր անունները¹⁶, իսկ վերջում հիշվում է Չելեպին և այս անգամ արդեն մանրամասն տրվում է նրա աշխատությունների ցուցակը. «Իսկ Երեմիային զՄաճարացն... գտուլթան Մէհմէտիս. զՕսմանցոցն Դ հատորս... զհրկիզութիւն Ստամբուլոյ... զԲագրատունեացն և զԿիլիկեցոցն համառօտ. զՄովսիսին համառօտ»¹⁷: Ահա այս վերջին երկուսը միասին (Հայկից մինչև Լևոն Վերջինը) կազմում են այն ձեռագիր աշխատությունը, որի մասին հստակ կերպով ակնարկում է Մ. Չամչյանը:

Սակայն խիստ ուշագրավ է Չամչյանի այն հավաստիացումը, թե Երեմիան իր համառոտ պատմությունը թարգմանել է թուրքերեն¹⁸ և այն էլ որոշ թուրք գրողների (գրագիտաց) հնդրանքով, որոնք հավանաբար ուղղում էին մի ընդհանուր կարծիք կազմել Հայոց անցյալի պատմության մասին: Ո՞վ կամ ովքե՞ր կարող էին լինել այդ գրողները (այսինքն գիտնականները): Դա պետք է լիներ, ամենայն հստակապես թվամբ, ժե՛ղ դարի թուրք նշանավոր պատմագիրներից մեկը:

Ժե՛ղ դարի արևելյան պատմագրության մեջ աչքի է ընկնում Մուսաղջիմ Իաշին (Մուսնեղջիմ Բաշը՝ պալատական գլխավոր աստղագետ), որը կարևոր դեմք է ոչ միայն թրքական, այլև համայն մահմեդական պատմագրության մեջ: Նրա հայտնի պատմական աշխատությունն է «Ջամի ադ-Դուվալ»-ը, որը նշանակում է հավաքածու պետությունների պատմության, կամ այլ կերպ ասած՝ Տիեզերական պատմություն: Այդ ընդարձակ աշխատության մեջ նա արաբերեն լեզվով շարադրել է արաբ և պարսիկ պատմագրության գրեթե բոլոր տեղեկությունները արևելյան հին ժողովուրդների մասին:

Օսմանյան պատմագրությունը, որն արար պատմագրության ժառանգորդը հանդիսացավ, ձգտում էր լինել համապարփակ և, ի մի բերելով արաբ և այլ պատմիչների բազմաթիվ տեղեկություններ, ուղղում էր տալ օսմանյան կայսրության հին ժողովուրդների ամբողջական պատմությունը: Սակայն արաբ պատմագրությունը չէր կարող բոլոր հարցերում նրան գոհացնել, որովհետև արաբ պատմագրության մեջ տեղեկություններ չկան հայոց պատմության հին՝ Արտաշեսյան և Արշակունյաց ժամանակաշրջանների մասին: Իսկ հայերը ժՁ և մանավանդ ժԷ դարերում Կ. Պոլսում արդեն որոշ նշանակություն ունեցող ժողովուրդ էին և որպես քաղաքակիրթ տարր, շատ ասպարեզներում որոշ դեր էին խաղում: Հենց Մեհմետ Բ (Ֆաթիհ) սուլթանի օրոք սկիզբ է առնում Կ. Պոլսի հայոց պատրիարքությունը, որի նշանակությունը Բարձր Դռան առաջ գնալով մեծանում էր: Այսպիսի մի ժողովրդի պատմությունը շարագրելը մի անհրաժեշտ պահանջ էր այդ ժամանակվա օսմանյան պատմագրության համար և ահա այս պահանջին պետք էր գոհացում տար Մուսաղ-

¹⁶ Հա, պատմագիրների այս ցուցակը արտադրված է նույն դարի հայտնի մատենագիր Վարդան Բաղիչեցու մոտ: Տե՛ս Ն. Ակիսյան, Վարդան Բաղիչեցի, Հանդէս Ամսօրեայ, 1952, էջ 63—65: Ինչպես նաև՝ Լ. Անասյան, Հայկական Մատենագիտություն, Երևան, 1959, Ներածություն, էջ ԼԼԼ—ԼԼԼ:

¹⁷ Մատ. ձեռ., էջ 154ր:

¹⁸ Բացի սրանից Երեմիան թուրքերեն է թարգմանել նաև Աղեքսանդրի պատմությունը, Նոր կտակարանը, մասամբ նաև Հին կտակարանը, Հայսմավուրքը (համառոտ), և այլն:

10 Տեղեկագիր 7—8

ջիմ Բաշին իր ընդարձակ աշխատության մեջ: Եվ իրոք նա տալիս է Հայոց համառոտ պատմությունը՝ Հայկից մինչև Լևոն Վերջինը¹⁹:

Մունաջջիմ Բաշին արտահայտում է իր ժամանակաշրջանի մտայնությունը: Նրա պատմական աշխատության մեջ Հայոց պատմությանը վերաբերող վերոհիշյալ հատվածը անժխտելիորեն գրված է եղել մի հայի կողմից, որովհետև շարադրված է հայկական քրիստոնեական մտայնությամբ: Այստեղ հիշվում են հայերի ավանդական նահապետներն ու թագավորները, ինչպես Հայկը, Արամը, Տիգրանը և ուրիշները: Պատմվում է հայկական պետության հզորության և բարգավաճման մասին և այլն: Հիշվում է հայոց դարձի պատմությունը և Տրդատի ու Դրեգոր Լուսավորչի գործունեությունը՝ դիտված հայ քրիստոնեական տեսանկյունից:

Այս հատվածը ժե՛ղարի մատենագրի ձեռքով գրված լինելու մասին են վերկայում նաև տեղանունների ձևերը: Այսպես, Դիվինը կոչվում է Թուփրակ-Կալա, այսինքն հողե-բերդ: Սմբատ Ա-ը, ասում է հեղինակը, խաչվեց Թուփրակ-Կալայում: Դաբիլ ձևը, որով արար մատենագիրները կոչում էին Դիվինը, այստեղ բոլորովին չի օգտագործվում²⁰: Եվ հենց սրա հիման վրա կարելի է եզրակացնել, որ այս հատվածի աղբյուրի հեղինակը արար պատմագրության հետ կապ ունեցող անձնավորություն չի եղել:

Ո՛րն է Մունաջջիմ Բաշիի աղբյուրը այս հատվածի համար: Կասկած չի կարող լինել, որ նա մի հայկական աղբյուր է օգտագործել, որովհետև արար պատմագրությունը Հայոց պատմությանը ծանոթ էր միայն է՛ր դարից սկսած, իսկ դրան նախորդող դարերի մասին լոկ մի քանի կցկտուր տեղեկություններ կարելի է գտնել արար պատմագիրների մոտ (օրինակ մարզպանական շրջանի մասին): Իսկ որտեղի՞ց կարող էր հեղինակը քաղել Հայոց պատմության բոլոր դեմքերի մանրամասն ցուցակը՝ սկսած Հայկից մինչև Հայաստանի մարզպանները, եթե ոչ որևէ հայկական աղբյուրից: Այս մասին վկայում է հենց ինքը Մունաջջիմ Բաշին, որի պատմության թուրքերեն ամփոփ թարգմանության առաջաբանում կա նրա աղբյուրների ցուցակը, որոնք երեք մասի են բաժանվում հենց իրեն հեղինակի կողմից՝ արաբական, պարսկական և թուրքական: Այս վերջինիս մեջ նա հիշում է նաև حوائس تاريخی²¹: Օսմանյան պատմության գիտակ Յ. Համմերը «Օսմանյան պետության պատմության» մեջ սույն նախադասությունը այդպես է հասկանում՝ «Հովհաննեսի պատմության թարգմանությունը»²² առանց հետագա մեկնարանությունների, թե ով կարող էր լինել այդ Հովհաննեսը և ինչու պետք էր իր օգտագործած աղբյուրը կոչվեր հենց Հովհաննեսի անունով: Դ. Բարինգերը օսմանյան պատմագրության մասին իր հայտնի աշխատության մեջ²³ նույնպես քըննություն չի առնում Մունաջջիմ Բաշու աղբյուրների հարցը և այդ մասին

¹⁹ Սահաիֆ ուլ-Ախրար, Կ. Պոլիս, 1858 (թուրքերեն), Ա, էջ 652—663:

²⁰ Մունաջջիմ Բաշիի աշխատության այլ մասերում, որոնց շարադրման համար նա օգտվել է այլ աղբյուրներից, արաբական لادن ձևն օգտագործվում է:

²¹ Սահաիֆ ուլ-Ախրար, Կ. Պոլիս, 1858 (թուրքերեն), Ա, էջ 7:

²² J. Hammer, Geschichte des osmanischen Reiches, Pest, 1851, VII, էջ 545.

²³ F. Babinger, Die Geschichtsschreiber der Osmanen und ihre Werke, Leipzig, 1927, էջ 234. C. Brockelmann, Geschichte der arabischen Litteratur, II, Berlin, 1902, էջ 443.

խոսակիս նշում է լուի Համմերի վերոհիշյալ աշխատության հիշյալ էջը: Եթե իսկապես Մուսնաջիմ Բաշիի աղբյուրների ցուցակում նշված անունը պետք է կարդալ «Հովհաննես», ապա ուր պատմագիրը կարող էր լինել դա: Արդյո՞ք դա Հովհաննես Դրասխանակերտցին էր: Պարզ է, որ Հայոց այս համառոտ պատմության որևէ անուն կարող էր տալ հենց այն հալ հեղինակը, որը Մուսնաջիմ Բաշիին տվել է նրա թուրքերեն թարգմանությունը:

Սակայն նախքան այս հայկական աղբյուրի անվան հարցը լուծելը, տեսնենք, թե ով էր այն հալ հեղինակը, որը Մուսնաջիմ Բաշիին տվել էր վերոհիշյալ թուրքերեն թարգմանությունը: Մեր պրպտումները բերին այն եզրակացություն, որ դա կարող էր լինել միայն Երեմիա Չելեպի Գլոմյուրճյանը, որի մասին Մ. Չամչյանը հստակ կերպով ասում է. որ թուրքերեն է թարգմանել իր Հայոց պատմությունը, որն սկսում է Հայկից և հասնում մինչև Լևոն Վերջինը: Դժբախտաբար Երեմիայի կազմած համառոտ Հայոց պատմության հայերեն բնագիրը կորած է (ավելի ճիշտ կլիներ ասել, որ նրա գոյության մասին գեո ոչ ոք չի խոսել)²⁴:

Սակայն Երեմիայի Մատենադարանում կա Երեմիա Չելեպիի մի այլ աշխատությունը՝ Մատենադարանի վերոհիշյալ ձեռագրում, որտեղ ի շարս այլ հարցերի, տալիս է նաև մի այսպիսի հարց, թե ովքեր են եղել Հայոց թագավորները և իր պատասխանում շարադրում է Հայոց թագավորների ցուցակը Հայկից մինչև Լևոն Վերջինը: Սա, իհարկե, սոսկ տոհմաբանություն է, բայց երբ այն համեմատում ենք Մուսնաջիմ Բաշիի տված համառոտ Հայոց պատմության հետ, գալիս ենք այն եզրակացության, որ այդ երկուսն էլ մի աղբյուր ունեն, այսինքն Երեմիա Չելեպի Գլոմյուրճյանը, հետևյալ պատճառներով:

1. Երկուսի մեջ էլ, սկսելով Հայոց ավանդական շրջանի պատմությունից, տրվում է չորս թագավորական ցեղերի (Հայկյան, Արշակունյաց, Բագրատունյաց և Ռուբինյան) պատմությունը:

2. Մուսնաջիմ Բաշիի թուրքերեն թարգմանության մեջ կրկնվում են այն սխալները, որոնք կան վերոհիշյալ ձեռագրում: Այսպես, օրինակ, Մատ. ձեռ. Ե գրքի հերոս Վարդան Մամիկոնյանը կոչվում է մարզպան, այնինչ նա սպարապետ էր: Մուսնաջիմ Բաշիի մոտ նույնպես նա կոչվում է «Հաքիմ», այսինքն կառավարիչ, որը նույն մարզպանն է: Բացի սրանից, Բագրատունյաց թագավորների ցուցակում Աշոտ Ա-ից առաջ երկու դեպքում էլ կան ավելորդ երկու Աշոտ և երկու Սմբատ: Եթե ենթադրենք, որ դրանք կարող էին լինել Աշոտ Մասիկերը, կամ Սմբատ Խոստովանողը, ապա այդ դեպքում, որտե՞ղ է Բագրատ Բագրատունին, որը նրանցից պակաս նշանավոր չէր Թ գրքի պատմության մեջ:

Բայց ամենակարևոր սխալը, որը կրկնվում է Երկուսի մեջ, դա Հայկական նահապետներից Միև Հայկակի անունն է: Մատ. ձեռ. այդ անունը սխալմամբ գրված է ՏԻՈՒՍ. Հայկակ²⁵ (մեծատառ Տ-ի և Մ-ի շփոթման պատճառով), այսինքն նրանք հասկացվում են որպես երկու տարբեր մարդիկ, մեկը

²⁴ Նրա ձեռագրերից շատերը մահվանից հետո տարվում են Վենետիկ (ս. լադար): ՏԼ՝ ս Կենսագրություն Երեմիա արանց, Հ. Մատթէոս Մաղաք-Թէոփիլեանց, Վենետիկ, 1839, Ա, էջ 241:

²⁵ Մատ. ձեռ. էջ 124ր.

Տիուս (Տիւս), մյուսը՝ Հայկակ: Մունաջիմ Բաշիի մոտ նույնպես սխալ ձեռով գրված է صكره حيكاك²⁶ և Տյուս, հետո Հայկակ: Այսպիսի սխալի կրկնությունը չէր կարող պատահական լինել, այլ պարզապես վկայում է այն մասին, որ Մունաջիմ Բաշիի ձեռքի տակ եղած հայկական աղբյուրը ոչ այլ ինչ էր, եթե ոչ Չամչյանի կողմից հիշատակված՝ Երեմիա Չելեպիի համառոտ պատմությունը: Երկուսի մեջ էլ իրար համընկնող մանր սխալներ դեռ էլի կարելի է հիշատակել, բայց այսքանը բավական է նրանց նույն աղբյուրից եկած լինելը ցույց տալու համար:

Պետք է խոստովանել, որ, իհարկե, կան նաև տարբերություններ երկու ցուցակների միջև, այսինքն Մատ. ձեռ. ցուցակը ավելի ամփոփ է, որոշ անուններ այնտեղ չեն հիշվում, բայց դա կարելի է բացատրել նրանով, որ սա բուն բնագիրը չէ, որը թուրքերեն է թարգմանվել, այլ պարզապես նրա ամփոփումը: Եվ կամ օրինակ Մատ. ձեռ. է դարի համար հիշում է երկու Ներսէս, մեկը Շիրակացի, մյուսը Կամսարական, իսկ Մունաջիմ Բաշիի մոտ կա միայն մի Ներսէս:

Այսպիսի տարբերությունները, իհարկե, էական չեն և դարձյալ նմանություններն են, որ գերակշռում են: Ուստի պարզ է, որ Մունաջիմ Բաշիի օգտագործած աղբյուրի հեղինակը Երեմիա Չելեպի Քյոմյուրճյանն է:

Այժմ վերադառնանք այդ աղբյուրների անվան էությունը ճշտելու հարցին: Երեմիա Չելեպիի մասին (Մատ. ձեռ.) հիշվում է, որ նա գրել է «ՎՄովսիսին համառոտ»: Այդ մասին է վկայում նաև Մ. Չամչյանը, երբ գրում է, որ նա թարգմանեց «Պատմություն Սորենցույն քաղաքով»: Սորենացին հայ պատմագրության կարևորագույն գեղձն է համարվում ոչ միայն այսօր, այլև նա այդպիսին է եղել մեր միջնադարյան մատենագրության մեջ: Ուստի տրամաբանական է, որ Երեմիա Չելեպին իր համառոտ պատմությունը, ինչպես նաև նրա թուրքերեն թարգմանությունը, պետք է կոչվի չինելի հենց նրա անունով և իսկապես, եթե նայենք բնագրին, ապա կտեսնենք, որ կետերի փոփոխմամբ և տառերի չնչին ձևափոխմամբ²⁷ կարծեցյալ «والتاريخ»-ը կարելի է կարդալ «التاريخ» (թուրքերենում ց հընչյունը գոյություն չունի) կամ «التاريخ» (թուրքերենում):

Այս բոլոր ասվածից ստացվում է հետևյալը.

1. Երեմիա Չելեպին կաղմել է Սորենացու Պատմության համառոտումը և նրան ավելացրել է Բագրատունյաց և Ռուբինյանց համառոտ պատմությունը: Սա կորած է:

2. Այս համառոտ պատմության հետ նա կաղմում է նաև մի ամփոփ տոհմաբանություն, որը պահպանվել է երկու դրչագիր օրինակներով (նոր Ջուղայում և Երևանում):

3. Համառոտ պատմությունը հավանաբար հենց Մունաջիմ Բաշիի խնդրանքով Երեմիա Չելեպին թարգմանել է թուրքերեն: Այդ մասին են վկայում թուրք հեղինակի խոսքերը՝ «Սորենացու պատմության թարգմանությունը»:

²⁶ Սահափ ուլ-Ախրար Կ. Պոլիս, 1868 (թուրքերեն), Ա, էջ 654:

²⁷ Պետք է նշել, որ Մունաջիմ Բաշիի մոտ կան հայկական անունների, կետագրական և այլ տիպի անհամար սխալներ, այնպես որ անունների հարցում պետք է զգուշություն ցուցաբերել:

Այստեղ հարց է ծագում՝ Ի՞նչ առնչություն ունի Մուսաջիմ Բաշի այսօր մեր ձեռքի տակ եղած ամփոփ թուրքերեն թարգմանության մեջ գտնված համառոտ Հայոց պատմությունը՝ Չելեպիևի կողմից թուրքերեն թարգմանված համառոտ պատմության հետ։ Արդյո՞ք մեր ձեռքի տակ եղածը հենց Չելեպիևի կողմից թարգմանվածն է։

Հայտնի է, որ Մուսաջիմ Բաշին իր գիրքը գրել է ոչ թե թուրքերեն այլ արաբերեն, ուստի և նա Չելեպիևի տված թարգմանությունը պետք է նորից թարգմանած լիներ արաբերենի, որից և Ահմեդ Նեդիմը պետք է կրկին թարգմաներ թուրքերեն։ Այս հարցը ճշտելու համար պետք էր ձեռքի տակ ունենալինք Մուսաջիմ Բաշի արաբերեն ձեռագրի համապատասխան հատվածը։ Դժբախտաբար մեզ ոչ մի կերպ չհաջողվեց ձեռք բերել Կ. Պոլսում գտնվող նրա ձեռագրերի որևէ պատճեն²⁸ (մանրաժապավիհ կամ լուսանկար)։ Ուստի այս հարցում մեզ մնում է լուի հավանական ենթադրություններ անել։

Մուսաջիմ Բաշի Պատմության հայերին վերաբերող հատվածը նրա թուրքերեն հրատարակությունից 21 տարի հետո հրատարակվում է հայերեն թարգմանությամբ, Դավուտ Թիրիաքյանի կողմից, որը գետեղում է նաև թուրքերեն բնագիրը²⁹։ Հրատարակիչը, որը նշել է Կ. Պոլսի ամերիկյան Ռոբերտ կոլեջում օսմաներենի ուսուցիչ, իր առաջարկում գրում է, որ այս համառոտ պատմությունը ինքը թարգմանել է Մուսաջիմ Բաշի «Արաբերեն թարիխին» (արաբերեն պատմությունից)։ Արդյո՞ք Թիրիաքյանը իսկապես արաբերենից, այսինքն հենց ձեռագրից է թարգմանել։

Համեմատելով Թիրիաքյանի հրատարակածը Ահմեդ Նեդիմի թուրքերեն հրատարակության հետ, կարելի է համոզվել, որ դրանք հիմնականում մեկը մյուսից են արտագրված։ Եվ որովհետև Ահմեդ Նեդիմը ապրել է Թիրիաքյանից մոտ մեկ դար առաջ և նրա գիրքը հրատարակվել է Թիրիաքյանի գրքից 21 տարի առաջ, ուստի պարզ է, թե ո՞վ ումից կարող էր արտագրել։

Թիրիաքյանի թուրքերեն բնագրի մեջ կան միայն հայկական անունների որոշ ուղղումներ և մի քանի բառերի փոքր տարբերություններ, իսկ մնացածը ամբողջովին նույնն է Ահմեդ Նեդիմի թարգմանության հետ։ Այստեղ կարելի է ենթադրել նաև, որ Թիրիաքյանը գուցե արտագրել է Ահմեդ Նեդիմից, բայց միևնույն ժամանակ այն համեմատել է Մուսաջիմ Բաշի արաբերեն բնագրի հետ։ Եթե սա ճիշտ լիներ, այս դեպքում մենք կարող էինք վստահ ասել, որ Ահմեդ Նեդիմի մոտ գտնվող հատվածը հենց Երեմիա Չելեպիևի ձեռքով կատարված թարգմանությունն է։

Համենայն դեպս մի բան պարզ է, որ Երեմիա Չելեպիևի կատարած թուրքերեն թարգմանությունը մի կարևոր երևույթ է մեր պատմագրության համար։ Մովսես Խորենացու Պատմությունը նախքան որևէ եվրոպական լեզվի թարգմանվելը, թարգմանվել է (թեկուզ համառոտությամբ) արևելյան միջավայրում և այն էլ հայի ջանքերով։

Մորենացու առաջին թարգմանությունը եվրոպական լեզուներով կատար-

²⁸ Այս հարցով զիմեցինք Նույնիսկ պրոֆ. Վ. Մինորսկուն (Քեմբրիջ), որն իր պատասխան նամակում նշելով Մուսաջիմ Բաշի ձեռագրի ձեռք բերման դժվարությունները, հայտնում է, որ մեզ ոչնչով օգնել չի կարող։

²⁹ Համառոտ Հայոց Պատմություն. թարգմանեց արաբերենէ Դավուտ Թիրիաքեան, (Կ. Պոլիս), 1879։

վել է միայն ժԸ դարում: Այսպես, առաջին անգամ 1733 թվին Սառկհովում լույս է տեսնում Բրենների կողմից կատարված լատիներեն թարգմանությունը, ապա 1736 թվին Լոնդոնում Վիլհելմ և Դեորգ Վիստոն Եղբայրների կողմից հրատարակվում է լատիներեն մի նոր թարգմանություն՝ հայերեն բնագրով հանդերձ:

Երեմիա Չելեպիի սյւս թարգմանությունը, որը կատարվել է ԺԷ դարի երկրորդ կեսում (Չելեպին մահացել է 1695 թվին), Հայոց պատմությունը հարեան ժողովուրդներին ծանոթացնելու մի հետաքրքրական փորձ պետք է համարել:

Մուհաջջիմ Բաշիի Պատմությունը շատ ընդարձակ աշխատություն է և արաբերեն գրված լինելով, հիշատակվում է թե՛ արաբական և թե՛ թուրքական պատմագրության մեջ: Նրա ձեռագրերը ղեռ անտիպ վիճակում մնում են Կ. Պոլսում: ԺԸ դարում Ահմեդ Նեզհիմը Մուհաջջիմ Բաշիի այս հսկայական աշխատությունը թարգմանում է թուրքերեն (և միևնույն ժամանակ ամփոփում), որը հրատարակվում է 1858 թվին Կ. Պոլսում՝ Երեք սովար հատորներով: Այստեղից կարելի է եզրակացնել, թե ինչպիսի հսկայական աշխատություն է հենց ինքը արաբերեն ամբողջական բնագիրը: Մի քանի տարի առաջ հայտնի իրանագետ Վ. Մինորսկին Մուհաջջիմ Բաշիի Պատմության արաբերեն բնագրից մի փոքրիկ հատված՝ «Շաղղաղյանների մասին»³⁰, հրատարակեց անգլերեն թարգմանությամբ և նրան կցեց մի լուրջ ուսումնասիրություն: Այս արաբերեն հատվածը համեմատելով թուրքերեն թարգմանության համապատասխան հատվածի հետ, տեսնում ենք, որ վերջինս արաբերեն բնագրից խիստ շատ է կրճատված: Ուստի Մուհաջջիմ Բաշիի աշխատության արժեքը վերջնականապես կարելի է որոշել ոչ թե Ահմեդ Նեզհիմի կատարած թարգմանությամբ, այլ պետք է սպասել նրա արաբերեն բնագրի ամբողջական հրատարակությանը:

А. Н. Тер-Гевондян

Еремия Кемюрчян как один из источников Мунадджима Баши

(Резюме)

В списке источников, использованных мусульманским автором XVII в. Мунадджимом Баши, наряду с турецкими источниками упоминается также перевод работы армянского автора, название которой И. Хаммер читает как „История Иоаннеса“ (Geschichte des osmanischen Reiches, VII, стр. 545). Турецкий перевод этой работы явился основой краткой истории Армянского царства, изложенной Мунадджимом Баши в его сочинении „Джами ад-Дувал“. Сравнивая этот отрывок в турецком переводе работы Мунадджима Баши со списком

³⁰ V. Minorsky, Studies in Caucasian History, London, 1953, arabic text, p. 1—12. Վերջերս Վ. Մինորսկին հրատարակեց նույն մատենագրի արաբերեն բնագրի մի ուրիշ հատվածը Շիրվանի պատմության մասին:

армянских царей (в. рук. № 72 Ереванского Матенадарана) Еремия Челепи Кемюрчяна (1637—1695), мы пришли к убеждению, что они имели в основе один и тот же источник, так как ошибки, имеющиеся в рук. № 72, повторяются и в работе Мунадджима Баши. Этим источником является, очевидно, не дошедшая до нас „История Армении“ Еремия Кемюрчяна, переведенная на турецкий язык самим автором; краткий же список в рук. № 72 представляет собой сокращенный вариант этой „Истории“.

A. N. Ter-Ghevondian

Yeremiah Keomurgian as one of the sources of Munadjjim Bashi

Summary

In the list of sources used by Munadjjim Bashi, the moslem author of the XVII c. -is mentioned also the translation of an Armenian author's work the title of which J. Hammer reads as „The History of Johannes“. The Turkish translation of this work appeared to be as a basis for the concise history of the Armenian kingdom stated in the work of Munadjjim Bashi named „Djami ad-duwal“. Comparing this passage of the Turkish translation of Munadjjim Bashi's work with the list of the Armenian kings (in the manuscript No 72 of the Matenadaran in Yerevan) edited by Yeremiah Cheleby Keomurgian, we have come to the persuasion that they had in the basis the very same source, since the errors available in the manuscript No 72 are repeated in the work of Munadjjim Bashi. Apparently that source appears to be the „History of Armenia“ of Yeremiah Keomurgian which did not reach us and it has been translated into Turkish by the author himself; as for the Tshort list in the manuscript No 72 it is an abreviation of this „History“.